



«Դիվիզանի կենտրոնական դպրոց» կրթական հիմնադրամ
Ք. Երևան 0009, Կոռյունի 19ա, ք. Դիվիզան 3905, Մոլդովական 77
Հեռ.՝ +374 268 2 37 99, +374 94 54 37 07
Էլփոստ՝ welcome@dcs.am
Կայքէջ՝ www.dcs.am

Ադմինիստրատիվ օգնական

[«Դիվիզանի կենտրոնական դպրոց» կրթական հիմնադրամ](#)

Մոլդովական 77, ք. Դիվիզան, Հայաստան

Դիմումների ընդունման վերջնաժամկետ՝ 31.01.2018 թ.

Աշխատանքը Դիվիզան քաղաքում է:

Աշխատանքի սկիզբը՝ աշխատակցի ընտրությունից անմիջապես հետո:

Աշխատանքի նկարագիր

Դպրոցը փնտրում է աշխատակից, ով կկարողանա ապահովել դպրոցի ուսուցիչների ու աշակերտների և ադմինիստրատիվ աշխատակիցների միջև փոխգործակցությունը և կիրականացնի տարատեսակ ադմինիստրատիվ աշխատանքներ:

Պարտականություններ

- Աշխատակազմին անհրաժեշտ ադմինիստրատիվ աջակցության տրամադրում
- Մուտքային և ելքային զանգերի ընդունում և վերահասցեավորում
- Ներդպրոցական և արտադպրոցական տիրույթում նամակագրության վարում
- Moodle համակարգի կորորդինացում
- Տարբեր (սյուժական և Էլեկտրոնային) ռեսուրսների տրամադրում աշակերտներին և աշխատակազմին

Պահանջվող հմտություններ և ունակություններ

- բարձրագույն կրթություն
- հայերենի գերազանց, ռուսերենի և անգլերենի լավ իմացություն
- համակարգչային հմտություններ (MS Office, Outlook)
- կազմակերպչական հմտություններ
- միջանձնային և հաղորդակցման գերազանց հմտություններ
- պատասխանատվության և ճշտապահության բարձր զգացում
- կրթության եւ ինքնակրթության նկատմամբ սեր և լուրջ վերաբերմունք
- արագ կողմնորոշվելու հմտություն և աշխատանքային հոսառություն

Դիմելու կարգ

Բոլոր հետաքրքրված թեկնածուներին խնդրում ենք vacancy@dcs.am Էլփոստի հասցեին ուղարկել ինքնակենսագրություն (CV) Adobe PDF ձևաչափով (լուսանկարը պարտադիր է): Նամակի վերնագրում անհրաժեշտ է նշել **Administrative Assistant**:

Հայտերն ընդունվում են մինչև 2018 թ.-ի հունվարի 31-ը ներառյալ:

Դիմորդներին հետագա քայլերի մասին մենք կտեղեկացնենք Էլփոստով՝ դիմելու վերջնաժամկետից հետո:

Կազմակերպության մասին

Դիլիջանի կենտրոնական դպրոցը ստեղծվել է 2013 թվականին [«Այբ» կրթական հիմնադրամի](#) կողմից՝ ՀՀ Կենտրոնական բանկի (այսուհետ՝ ՀՀ ԿԲ) հետ համագործակցության արդյունքում: Այն հիմնական դպրոց է՝ նախատեսված է 1-9-րդ դասարանցի մինչև 160 աշակերտի համար:

Դիլիջանի կենտրոնական դպրոցը «Այբ»-ի իրագործած առաջին դպրոցական նախագիծն է՝ արտաքին պատվերով և ֆինանսավորմամբ: «Այբ» կրթական հիմնադրամի և ՀՀ ԿԲ համագործակցության արդյունքում ստեղծվել է դպրոցի քաղաքային մոդել՝ հասանելի ոչ միայն ՀՀ ԿԲ աշխատակիցների, այլև Դիլիջանում բնակվող այլ ընտանիքների երեխաների համար: Դպրոցում ուսանելու պայմանները նույնն են բացառապես բոլոր աշակերտների համար:

Դպրոցը «Այբ» համակարգի առաջին դպրոցն է՝ կառուցված Երևան քաղաքից դուրս: Իր գաղափարախոսությամբ ու տեսլականով, ուսումնական ծրագրով, դասավանդման մեթոդաբանությամբ ու մոտեցումներով, ուսուցիչների և աշակերտների ընդունելության քաղականությամբ դպրոցն ամբողջությամբ սինխրոնացված է Երևանի «Այբ» տարրական և միջին դպրոցների հետ: «Այբ» կրթական հիմնադրամը նաև պատասխանատու է դպրոցի կառավարման և «Այբ»-ի չափանիշներին համապատասխան ուսումնական բովանդակության վերահսկողության համար:

